ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 29

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. մայիսի 13- ին կայացրած նիստի

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Զավեն Մխիթարյանի, Էմմա Պողոսյանի, Մարտիրոս գյուղի բնակչուհի Բուրաստան Բաբայանի դիմումները ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից պետական պատվերի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Զավեն Մխիթարյանին, Մարտիրոս գյուղի բնակչուհի Բուրաստան Բաբայանին տրամադրել <<Գանձաղբյուր>>, իսկ Էմմա Պողոսյանին <<Արզնի>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան